
**ՍՅՈՒՆԻՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ
ԽՆԴԻՐԸ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ Հ. Կ.

Հայաստանի նորագույն ժամանակաշրջանի պատմության առանցքային դրվագներն անխաղաղորեն առնչվում են ոչ մեծ թվով գործիչների անվան հետ: Նրանցից է մտածող, գիտնական, անվանի պետական-քաղաքական գործիչ Գարեգին Նժդեհը (1886-1955 թթ.): Ի շարս XX դարի առաջին կեսին հայությանն առնչվող տարբեր իրադարձությունների՝ Գ. Նժդեհի անունն անքակտելիորեն կապված է 1918-1921 թթ. զանգեզուրյան պայքարի հետ: 1919 թ. օգոստոսին ՀՅ Դաշնակցության Բյուրոյի որոշմամբ Գ. Նժդեհն ուղարկվեց ղեկավարելու Գողթանի ինքնապաշտպանությունը: Ստանձնելով Կապարգողթի (Կապան, Արևիք, Գողթան) ռազմական ուժերի ղեկավարությունը՝ Սյունյաց լեռնաշխարհից հեռացավ 1921 թ. հուլիսին, երբ հստակ էր, որ երկրամասը Խորհրդային Հայաստանի մաս է կազմելու:

Ակտիվ հասարակական-քաղաքական գործունեությանը զուգահեռ՝ Գ. Նժդեհը թողել է նաև մեծածավալ գրական ժառանգություն: Այդ ժառանգության մեջ կարևոր տեղ են գրավում 1919- 1921 թթ. զանգեզուրյան իրադարձություններին վերաբերող անդրադարձները: Զանգեզուրյան հերոսամարտի ղեկավարը նաև «գրչի մարդ» էր, ուստի օրինաչափ է, որ ժամանակակիցներին ու հաջորդ սերունդներին անձամբ է ներկայացրել հերոսամարտի պատմությունը: Այդ պայքարի նպատակն էր ամեն գնով Սյունիքը պահել մայր Հայաստանի կազմում: Այս իրողությունն արտացոլվել է վտարանդիության տարիներին Բոստոնի «Հայրենիք» ամսագրում տպագրած «Ինչո՞ւ պայքարեց Լեռնահայաստանը», «Լեռնահայաստանի գոյամարտը», «Հայ-բոլշևիկյան կռիվները», «Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից», «Ազատ Սյունիք», Ռազմիկ» թերթում տպագրած «Մի պատմական ճշմարտություն» հոդվածներում և «Իմ պատասխանը. Հայաստանի ողբերգությունը թրքաբոլշևիկ փաստաթղթերի լույսի տակ» գրքույկում: Եվ սա այն դեպքում, երբ Գ. Նժդեհի տրամադրած փաստաթղթերի հիման վրա Վարդան Գևորգյանը 1923 թ. Բուխարեստում հրատարակել էր սկզբնաղբյուրային արժեք ունեցող «Լեռնահայաստանի հերոսամարտը» աշխատությունը:

Գ. Նժդեհի ղեկավարությամբ 1919 թ. օգոստոսից մինչև 1920 թ. ապրիլը սյունեցիները պայքարում էին մուսավաթական Ադրբեջանի և վերջինիս աջակցող թուրք սպանների ու թուրքական զորաջոկատների դեմ: Այդ շրջանում Զանգեզուրը Հայաստանի Հանրապետության մաս էր: 1919 թ. մարտին Զանգեզուրի ընդհանուր կոմիսար էր նշանակվել Արսեն Շահմազյանը: Թուրք-ադրբեջանական համաթուրքական հեռանկարային ծրագրում նախատեսվում էր երկու «եղբայրակից պետությունների» (Թուրքիայի և Ադրբեջանի) միավորում: Իսկ այդ միավորման ճանապարհին առաջնային խոչընդոտ էր Սյունիքը: Օրինաչափ է, որ Կապարգողթի

պայքարի անհրաժեշտությունը Գ. Նժդեհը պայմանավորում է երկրամասը ՀՀ կազմում պահելու և համաթուրքական ծրագրերը վիժեցնելու տեսակետից: «Թշնամին նպատակադրել էր մեր ժողովրդի մի խոշոր մասի դիակի վրայով կամուրջ նետել Տաճկաստանի և Ադրբեջանի միջև և, տեր դառնալով Սյունյաց աշխարհի ու Գողթանի բնական ամրություններին, մշտական սարսափի տակ պահել մեր մատաղ հանրապետությունը», - փաստում է գորավարը¹: Նրա ռազմական տաղանդի շնորհիվ՝ մեկը մյուսի հետևից ձախողվեցին երկրամասին տիրելու մուսավաթականների փորձերը:

Ադրբեջանի խորհրդայնացումը (1920 թ. ապրիլի 28) նոր իրավիճակ ստեղծեց տարածաշրջանում. Անդրկովկաս էր վերադարձել Ռուսաստանը՝ երկրամասը վերագրավելու և այդտեղ խորհրդային կարգեր հաստատելու անխախտ նպատակամղումով: Եթե մինչ այդ Հայաստանի Հանրապետությունը հակամարտության մեջ էր մուսավաթական Ադրբեջանի հետ, ապա այժմ նրան փոխարինեց Խորհրդային Ադրբեջանը: Իսկ վերջինի դաշնակիցն ու հովանավորը Խորհրդային Ռուսաստանն էր:

Արդեն ապրիլի 30-ին Երևան հասավ բոլշևիկյան Ադրբեջանի վերջնագիրը. պահանջվում էր հայկական զորքերից մաքրել Ղարաբաղն ու Ջանգեզուրը: Դա խոսում էր ոչ միայն մուսավաթական և բոլշևիկ ադրբեջանցիների քաղաքականության նույնության, այլև խորհրդային Կարմիր բանակի ներկայությունից առաջ եկած մեծ ոգևորության մասին²: Ըստ այդմ էլ՝ 1920 թ. ամռանը Կապարգողթի՝ խորհրդային ուժերի դեմ պայքարելու անհրաժեշտությունը Գ. Նժդեհը բխեցնում էր հետևյալից. Կապանի ներկայացուցիչները 1920 թ. հուլիսի 11-ին տեսակցել էին Կարմիր բանակի պատվիրակության հետ և տեղեկացել, որ նրանք եկել էին Ջանգեզուրն ու Ղարաբաղը Խորհրդային Ադրբեջանին կցելու համար³: Ինչպես տեսնում ենք, խորհրդային ուժերի դեմ այունեցիների պայքարը Գ. Նժդեհը հիմնավորում է երկրամասն Ադրբեջանին կցելու հեռանկարը բացառելու տեսակետից: Պարզաբանենք, որ իրականում Մոսկվան Սյունիքն Ադրբեջանին միացնելու խնդիր չէր դրել: Մա հաստատվում է բազմաթիվ վավերագրերով: Ամենայն հավանականությամբ, խորհրդային զինվորական կազմավորումների հրամանատարները սոսկ Բաքվի բոլշևիկների տեսակետն են ներկայացրել այունեցիներին:

Կանգնած լինելով հանրապետության համար կործանարար հայ-ռուսական պատերազմի վտանգի առաջ՝ 1920 թ. օգոստոսի 10-ին Թիֆլիսում ստորագրված հայ-ռուսական համաձայնագրով ՀՀ-ն համակերպվեց, որ Խորհրդային Ռուսաստանի զորքերը ժամանակավորապես ռազմակալեն «վիճելի» համարվող Ղարաբաղը,

¹ Նժդեհ Գ., Հայ-բոլշևիկյան կռիվները (Երկեր, երկու հատորով, հ. 2, Ե., 2002, էջ 41):

² Տե՛ս Գոհրաբյան Է. Ա., 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Ե., 1997, էջ 14:

³ Տե՛ս Նժդեհ Գ., Ինչու պայքարեց Լեռնահայաստանը, հ. 2, էջ 11: Նույնի՝ Հայ-բոլշևիկյան կռիվները, հ. 2, էջ 31:

Զանգեզուրը և Նախիջևանը: Սահմանվում էր, որ «Խորհրդային զորքերի կողմից վիճելի տարածքների գրավումով չի կանխորոշվում այդ տարածքների նկատմամբ Հայաստանի Հանրապետության կամ Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության իրավունքների հարցը»⁴: Համաձայնագրի այս դրույթը ևս ակնհայտորեն փաստում է հետևյալ իրողությունը. Խորհրդային Ռուսաստանը չէր ցանկանում իր համար ռազմավարական կարևորություն ունեցող այդ տարածքները տալ ոչ խորհրդային Հայաստանին: Նա նաև այդ տարածքներն իրավական առումով չէր հանձնում Խորհրդային Ադրբեջանին՝ Հայաստանին իր քաղաքականության ծիրում պահելու և ամբողջությամբ Արևմուտքի գիրկը չնետելու համար:

Արդեն օգոստոսի 15-ին Դրոյի միջոցով Գ. Նժդեհը ստացավ ՀՀ զինվորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանի օգոստոսի 10-ի հրահանգը՝ իր զորամասով թողնել Զանգեզուրը և Երևան անցնել⁵: Սակայն նա չենթարկվեց այս կարգադրությանը: Պայքարը շարունակելուն զորավարին մղում էր իր հաստատ համոզումը, թե Թիֆլիսի համաձայնագրով ՀՀ-ն «ոչ թե միայն Զանգեզուրն էր հանձնում կարմիրներին, այլև Արարատյան Հայաստանը»⁶: Այդ համոզման արդյունք է, որ հետագայում նա գրում էր. «Հակառակ հանրապետական Հայաստանի կառավարության և Մոսկվայի ներկայացուցիչ Լեզրանի միջև կնքված պայմանագրին, որով Զանգեզուրը թողնված էր Ադրբեջանին, իմ ժողովրդական բանակը, զենքի ուժով, խորհրդային իշխանությանը պարտադրեց իր կամքը, Մյունիքի կցումը Հայաստանին»⁷: Դժվար է պատկերացնել, թե ինչպես կդասավորվեր Մյունիքի հետագա ճակատագիրը, եթե Գ. Նժդեհը ենթարկվեր Ռ. Տեր-Մինասյանի կարգադրությանը: Երկրորդ կարծիք լինել չի կարող. իրադարձությունների հորձանուտում Նժդեհը միանգամայն ճիշտ կողմնորոշվեց:

1920 թ. թուրք-հայկական պատերազմում հայկական բանակի պարտության պայմաններում, Խորհրդային Ռուսաստանի 11-րդ Գարմիր բանակի զորամասերի ուղեկցությամբ, 1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանի Հանրապետության հյուսիսարևելյան սահմաններից Քարվանսարա մտած Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն էրկիրը հայտարարեց «սոցիալիստական խորհրդային հանրապետություն»: Հայաստանի խորհրդայնացման ընթացքը հեշտացնելու, զուտ քաղաքական-քարոզչական նպատակով նոյեմբերի 30-ին Ադրբեջանի հեղկումը հայտարարեց Նախիջևանից, Զանգեզուրից և Լեռնային Ղարաբաղից հոգուտ

⁴ Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբագրությամբ՝ Գ. Ա. Գալոյանի և Վ. Ն. Ղազախեցյանի, Ե., 2000, էջ 248:

⁵ Տե՛ս Գեորգեան Վ., Լեռնահայաստանի հերոսամարտը (1919-1921), Ե., 1991, էջ 68:

⁶ Նժդեհ Գ., Հայ-բոլշևիկյան կռիվները, էջ 34:

⁷ Նժդեհ Գ., Իմ պատասխանը. Հայաստանի ողբերգությունը թրքաբոլշևիկ փաստաթղթերի լույսի տակ, հ. 2, էջ 188:

Խորհրդային Հայաստանի հրաժարվելու մասին⁸: Ամենայն հավանականությամբ, ադրբեջանական այս որոշումը կայացվել էր ռուսական (մասնավորաբար Բաքվում գտնվող Գեորգի Օրջոնիկիձեի) հրահանգի համաձայն:

Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը որոշեց զերծ մնալ ռազմական բախումից: Դեկտեմբերի 2-ին ՀՀ կառավարության ներկայացուցիչներ Դրաստամատ Կանայանի, Համբարձում Տերտերյանի և ՀՀ-ում Խորհրդային Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բորիս Լեգրանի միջև Երևանում ստորագրված համաձայնագրի համաձայն՝ Հայաստանը հռչակվեց «անկախ սոցիալիստական հանրապետություն»: Ի շարս այլ հարցերի՝ համաձայնագրով Հայաստանի մաս էր ճանաչվում նաև Չանգեզուրը⁹:

Ամիսներ շարունակ ադրբեջանա-ռուսական զորքերի դեմ կենաց և մահու կոչով մղող պրոպեգանդները չհավատացին Չանգեզուրը Հայաստանի մաս ճանաչելու խոստումները: «Ազատ Սյունիք» հողվածաշարում Գ. Նժդեհին Ադրբեջանի հեղկոմի հայտարարությունն իրավամբ հայ զանգվածներին «խաբեպատիր խոստումներով կաշառելու» գործողություն է համարում: Նշյալ իրողությունը նա բացատրում էր այն դառը փորձով, որ մինչ այդ՝ Ադրբեջանի խորհրդայնացմանը հաջորդող օրերին, բոլշևիկներն այս տարածքներն Ադրբեջանի մաս էին հայտարարել¹⁰: Ավելին՝ 1920 թ. դեկտեմբերի 25-ին Տաթևի վանքում տեղի ունեցած համազանգեզուրյան առաջին համագումարը որոշեց «Չանգեզուրը հայտարարել ժամանակավորապես ինքնավար, մտցնելով հանրապետական իրավակարգ, մնալով անկախ՝ մինչև քաղաքական հնարավորություն կունենա միանալու իր մայր երկրի՝ Հայաստանի հետ»¹¹: Այստեղ «մայր երկիր» ասելով հասկացվում էր Հայաստանի Հանրապետությունը և ոչ թե Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը (ՀՄԽՀ): Այն, որ զանգեզուրցիները կողմ չէին արտահայտվում ՀՄԽՀ-ին միանալուն, պայմանավորված էր երկրամասի հայության՝ շուրջ կես տարի խորհրդային զորամասերի դեմ պայքարելու իրողությամբ, Չանգեզուրում բոլշևիկների կատարած դաժանություններով, ինչպես նաև նրանց ու առանձնապես Գ. Նժդեհի համոզումով, թե «Սովետական Ռուսաստանն ու Ադրբեջանը ... ցանկացան գլխատել ու իսպառ ոչնչացնել հայ ժողովուրդը և ներս հրավիրեցին տաճկական հորդաներին, Քեմալի գլխավորությամբ, Հայաստան, և Ալեքսանդրապոլի պատերի տակ ստիպեցին Հայաստանին ընդունելու այսպես կոչված «խորհրդային» իրավակարգը»¹²:

Խորհրդային Հայաստանի իշխանությունները 1920 թ. վերջին և 1921 թ. սկզբին իրական հնարավորություն չունեին ՀՄԽՀ վերահսկողությունը տարածելու

⁸ Տե՛ս Կարախանյանի *Նոտաները Կարաբախի համաձայնագրի մասին*, Երևան, 1992, թ. 602.

⁹ Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), էջ 383-384:

¹⁰ Տե՛ս Նժդեհի Գ., *Ազատ Սյունիք*, հ. 2, էջ 115:

¹¹ Գեորգեան Վ., *նշվ. աշխ.*, էջ 126:

¹² Նժդեհի Գ., *Բն պատասխանը*, հ. 2, էջ 214:

Զանգեզուրի վրա, ուստի բավարարվում էին միայն «դեկլարացիաներ» ներկայացնելով: «Զանգեզուրի գյուղացիությանը» ուղղված դիմումում (1921 թ. հունվարի 29) Հայաստանի հեղկոմը տեղեկացնում էր Ադրբեջանի հեղկոմի հոչակագրի մասին, հայտարարում, որ խորհրդային իշխանության համար առաջնային խնդիր է Զանգեզուրը ՀՍԽՀ-ին միացնելը և առաջարկում վերջ տալ «աննպատակ դիմադրությանը և ճանաչել Հայաստանի խոր[հրդային] իշխանությունը»¹³: Մյունեցիները հավատ չընծայեցին նաև այս հայտարարությանը:

Հայաստանի Հանրապետության խորհրդայնացմանը հաջորդող ամիսներին Հայհեղկոմի իրականացրած կոշտ քաղաքականությունը, ինչպես նաև օբյեկտիվորեն գոյություն ունեցող խնդիրները բնակչության լայն շերտերում դժգոհություններ առաջացրին նոր իշխանությունների հանդեպ: Դրա հետևանքով նախկինում իշխանությունից հրաժարված ՀՅ Դաշնակցության դեկավարությամբ 1921 թ. փետրվարին հակախորհրդային ապստամբություն բռնկվեց: Փետրվարի 18-ին ապստամբները գրավեցին Երևանը և ՀՀ վերջին վարչապետ Սիմոն Վրացյանի գլխավորությամբ ստեղծեցին կառավարություն՝ «Հայրենիքի փրկության կոմիտե» անվանումով: Սակայն ուժերն անհավասար էին, և ապրիլի 2-ին խորհրդային զերակշիռ զորամասերը գրավեցին Երևանը: Հազարավոր գաղթականների ուղեկցությամբ «Հայրենիքի փրկության կոմիտեն» Բաշ-Գառնի-Դարալագյազ ճանապարհով ապաստանեց Զանգեզուրում: Ապրիլի 15-ին Դարալագյազը գրավելուց հետո խորհրդային կողմը դադարեցրեց ռազմական գործողությունները՝ փորձելով բանակցությունների միջոցով օր առաջ խորհրդայնացնել Զանգեզուրը¹⁴:

Տաթևի վանքում տեղի ունեցած Զանգեզուրի հայության երկրորդ համագումարում (1921 թ. ապրիլի 26) Ինքնավար Մյունիքը վերանվանեց Լեռնահայաստան: Ստեղծվեց Լեռնահայաստանի կառավարություն՝ Գ. Նժդեհի գլխավորությամբ: Լեռնահայաստանի հոչակումը, ինչպես նաև 3-4 ամսով «Ազատ Լեռնահայաստանի գոյության» անհրաժեշտությունը Գ. Նժդեհը բացատրում է հետևյալով. որոշակի ժամանակ էր անհրաժեշտ Զանգեզուր նահանջած երևանյան գաղթականներին, մտավորականներին ու զինվորներին Պարսկաստան անցնելու համար¹⁵: Երևանից եկող մի շարք առաջարկներից հետո Լեռնահայաստանի կառավարությունը համաձայնություն տվեց Զանգեզուրի հետագա ճակատագրի հարցով բանակցություններ սկսել խորհրդային ներկայացուցիչների հետ: Այդ նպատակով ՀՍԽՀ կողմից Արտաշես Կարինյանի և Վասիլի Մելնիկովի գլխավորությամբ պատվիրակություն ուղարկվեց՝ Լեռնահայաստանի իշխանությունների հետ համաձայնության գալու համար: Սակայն մայիսի 12-15-ին Սիսիանի Ղալաջուղ գյուղում տեղի ունեցած բանակցությունները դրական արդյունք չտվեցին և դադարեցին: Բանն

¹³ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 1, ց. 1, գ. 169, թ. 1:

¹⁴ Մանրամասն տե՛ս Գ. Նժդեհի «Հայաստանը 1920-1940 թթ.», Ե., 2006, էջ 27-85:

¹⁵ Տե՛ս Գ. Նժդեհի «Գ. Նժդեհի պայքարեց Լեռնահայաստանը», հ. 2, էջ 12: Ազատ Մյունիք, էջ 150:

այն է, որ Լեոնահայաստանի ղեկավարները փորձում էին ձգձգել բանակցությունները¹⁶:

Հունիսի 1-ին Լեոնահայաստանը վերանվանվեց Հայաստան: Մա է՛լ ավելի գայրացրեց խորհրդային կողմին: Խաղաղ ճանապարհով Չանգեզուրը խորհրդայնացնելու փորձերի ձախողումից հետո ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրոն 1921 թ. հունիսի 3-ին որոշեց հունիսի վերջին ռազմական ճանապարհով լուծել «հակահեղափոխական Չանգեզուրի» խնդիրը¹⁷: Որոշման կենսագործումից առաջ՝ հունիսի 13-ին, ՀՄԽՀ Ժողկոմխորհը նամակ-հայտարարությունով դիմեց Լեոնահայաստանի իշխանություններին: Հայտարարության համաձայն՝ երկրամասը կազմելու էր Խորհրդային Հայաստանի մասը, ներում էր շնորհվելու խորհրդային իշխանությունների դեմ պայքարած գործիչներին և այլն¹⁸: Նշյալ հայտարարության հրապարակումից երկու օր անց՝ հունիսի 15-ին, Յապոնի գլխավորությամբ Լեոնահայաստանի զինված ուժերը գրավեցին խորհրդային Դարալագյազը: Ա. Հ. Սիմոնյանի կարծիքով՝ Դարալագյազի վրա հարձակումը «ոչ մի արդարացում չուներ», քանի որ «արդեն սկզբունքորեն լուծված էր Չանգեզուրի հարցը՝ հօգուտ Հայաստանի, և լուծված էր Սյունիքի հերոսական ժողովրդի մղած երկարատև և հաղթական կռիվների շնորհիվ»¹⁹: Դարալագյազի գրավումը ՀՄԽՀ իշխանությունները (և առանձնապես Ժողկոմխորհի նախագահ և ռազմ-գործող կոմ Ալեքսանդր Մյասնիկյանը) լավագույնս օգտագործեցին Չանգեզուրի դեմ ռազմական գործողություններ ծավալելը հիմնավորելու համար՝ դեմ արտահայտվելով ՀՅԴ-ի և ՌԿ(Բ)Կ-ի միջև Ռիգայում կայանալիք բանակցություններին, որի քննարկելիք հարցերից մեկը Չանգեզուրը խաղաղ ճանապարհով խորհրդայնացնելու խնդիրն էր: Հատկանշական է, որ Ա. Կարինյանի գլխավորած պատվիրակության Չանգեզուր մեկնելը, բանակցությունների հանգամանքները, Դարալագյազի գրավումը, Չանգեզուրի խորհրդայնացման ընթացքը լայնորեն լուսաբանվում էին Խորհրդային Հայաստանի մամուլում²⁰:

Գ. Նժդեհի վկայությամբ՝ ՀՄԽՀ Ժողկոմխորհի հունիսի 13-ի հայտարարությանն ինքը տեղեկացել էր միայն հունիսի վերջին²¹: «Իմ պատասխանը» գրքում նա ամբողջությամբ բերում է վերը հիշատակված հայտարարությունը և նշում, որ այն «քաղաքականապես լիուլի բավարարում էր» իրենց: «Այժմ մի նոր դեկրետով չեղյալ էր հայտարարվում տարի առաջ Մոսկվայի ներկայացուցիչ Լեզրանի և Հայաստանի

¹⁶ Տե՛ս Սիմոնյան Ա. Հ., Չանգեզուրի գոյամարտը (1920-1921 թթ.), Ե., 2000, էջ 498-513: Ղազախեցյան Վ. Ն., Նժդեհը Չանգեզուրում (1920 թ. վերջ - 1921 թ. հուլիս), Ե., 2001, էջ 38-39:

¹⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1021, ց. 2, գ. 1187, թ. 13:

¹⁸ Տե՛ս Խորհրդային Հայաստան, 19.06.1921:

¹⁹ Սիմոնյան Ա. Հ., նշվ. աշխ., էջ 555:

²⁰ Տե՛ս Սուքիասյան Հ., ՀՄԽՀ արագործող կոմստի «Բյուլետենը» հակադաշնակցական գաղափարաքարոզական պայքարում (1921-1922 թթ.) (Բանբեր Հայաստանի արխիվների, 2008, N 2, էջ 238):

²¹ Նժդեհ Գ., Ազատ Սյունիք, էջ 169:

միջև կնքված չարարաստիկ պայմանագիրը, որի գործությամբ Մյունյաց աշխարհը թողնված էր Ադրբեջանին: Քաղաքական այդ ակտից հետո, իր մայր երկրին միացած մեր հաղթական երկրամասը, մի ծանր հարկադրանքի տակ, խորհրդային իշխանության առջև պիտի բացեր իր դռները: Է՛լ էս անելիք չունեի», - ամփոփում է գորավարը²²: Իսկ «Լեոնահայաստանի գոյամարտը» հողվածում այս առնչությամբ նշում է. «Մյունիքը... տեղի տվեց առանց կռվի, իր կամքը խորհրդային իշխանությանը պարտադրելուց, այն է՝ Հայաստանի անբաժան մասը ճանաչվելուց հետո»²³: Իր աշխատություններում Գ. Նժդեհը նրբորեն շրջանցում է խորհրդային գերակշիռ ուժերի առաջ տեղի տալու հանգամանքը և իրականությունը ներկայացնում այնպես, կարծես առանց կռվի է թողել Մյունիքը:

Հունիսի 26-ին Դարալագյազը վերագրավելուց հետո Կարմիր բանակը շարունակեց ռազմական գործողությունները՝ խնդիր դնելով պարտության մատնել Չանգեգուրում կենտրոնացած «հակահեղափոխական ուժերին» և երկրամասը միավորել Խորհրդային Հայաստանին: Խորհրդային գերակշիռ ուժերի առաջխաղացման հետևանքով շատ արագ Չանգեգուրը խորհրդայնացվեց, իսկ հուլիսի 9-ին Գ. Նժդեհն իր մի խումբ մարտիկներով անցավ Արաքս գետի պարսկական ափը²⁴: Չանգեգուրի ինքնապաշտպանությունն ունեցավ այն արդյունքը, որ երկրամասի հայությունը փրկվեց ադրբեջանական ջարդերից: Առաջին հերթին լեռնականների դիմադրության շնորհիվ էր նաև, որ Չանգեգուրի գավառի հայաբնակ հատվածը միացավ Խորհրդային Հայաստանին:

Այսպիսով, կարող ենք միանշանակ փաստել, որ, անդրադառնալով Մյունիքի հայության պայքարին, Գ. Նժդեհն իր աշխատություններում միանշանակ ընդունում է, որ իր և զինակիցների վերջնական նպատակը Մյունիքը մայր Հայաստանի կազմում պահելն էր: Սա պայմանավորված էր նրա հստակ համոզումով. Մյունիքը Հայաստանի «աշխարհագրական ողնաշարն» է, առանց որի վերջինը գոյություն ունենալ չի կարող²⁵: «Ինչու պայքարեց Լեոնահայաստանը» հողվածում գորավարը հետևյալ կերպ է ամփոփում սյունյաց գոյամարտը. «Հայաստանի տերիտորիան անդամահատության մահացու փորձից ազատելու համար, նախ Մյունիքի մի մասը, ապա ամբողջ Լեոնահայաստանը զենքի դիմեց և պաշտպանվեց, մինչև որ Խորհրդային Հայաստանի խելագար հեղկոմը՝ Կասյանի ղեկավարությամբ փոխարինվեց Մյասնիկյանի կառավարությամբ և մինչև որ երկարատև ու արյունալի կռիվներից խրատված Մոսկվան վերջապես բարեհաճեց Մյունիքը կցել Հայաստանին»²⁶: Փաստենք՝ կարմիր թելի նման այս միտքն անցնում է խնդրո առարկա թեմատիկային նվիրված Գ. Նժդեհի աշխատություններում:

²² Նժդեհ Գ., Իմ պատասխանը, հ. 2, էջ 247:

²³ Նժդեհ Գ., Լեոնահայաստանի գոյամարտը, հ. 2, էջ 26:

²⁴ Տե՛ս Միսունյան Ա. Ն., նշվ. աշխ., էջ 601-602:

²⁵ Տե՛ս Նժդեհ Գ., Լեոնահայաստանի գոյամարտը, հ. 2, էջ 15:

²⁶ Նժդեհ Գ., Բնչու պայքարեց Լեոնահայաստանը, հ. 2, էջ 11:

**ПРОБЛЕМА СОХРАНЕНИЯ СЮНИКА
В СОСТАВЕ АРМЕНИИ В ТРУДАХ ГАРЕГИНА НЖДЕ**

СУКИАСЯН А. К.

Резюме

Имя известного государственного и политического деятеля Гарегина Нжде связано с борьбой Сюника в 1918-1921 гг. В своих исторических работах он указывает на необходимость сохранения Сюника в составе Армении, поскольку по его глубокому убеждению Сюник является “географическим хребтом” Армении, без которого она не может существовать.